



ՓԻԼԻՊՈՒՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԻ ՎԱՆԱՀԱՅՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՏՄԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ ՆԵՐՍԵՍ
ՇՆՈՐՀԱԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ
(1166—1173)

554 թ. Դվինի եկեղեցական ժողովից հետո, երբ Հայ Եկեղեցին, մերժելով Քաղկեդոնի Չորրորդ Տիեզերական ժողովի (451) որոշումները, անջատվեց բյուզանդական եկեղեցուց, բյուզանդական արքունիքը բազմիցս փորձեց վերացնելու երկու եկեղեցիների և ժողովուրդների միջև առաջացած խզումը: Դրան էին ուղղված VII դարում Հերակլիոս կայսեր, IX դարում Փոտ պատրիարքի, X դարում Նիկողայոս Մխտիկոս պատրիարքի ջանքերը: Այդ հարցի շուրջը XI դարի առաջին կեսին տեղի ունեցան երկար և ապարդյուն բանակցություններ, դավանաբանական բանավեճեր: Բյուզանդական կառավարության այդ քայլին դրդող պատճառները միանգամայն պարզ էին: Նա ձգտում էր վերացնել Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը, ապա և Հայաստանը քաղաքական տեսակետից ենթարկել Բյուզանդիային:

XI դարում Կիլիկիայում Հայկական պետության ստեղծումից և Բյուզանդիայի՝ հայերին անկախությունից բռնի ուժով պրկելու անհաջող փորձերից հետո բյուզանդական արքունիքի արտաքին քաղաքականության օրակարգում դարձյալ դրվեց հայ և բյուզանդական եկեղեցիների միության հարցը: Բյուզանդիան չէր թաքցնում, որ իր վերջնական նպատակը Հայ Եկեղեցին Կոստանդ-

նուպոլսի պատրիարքությանը ենթարկելն էր: Հռոմկլայի հայոց կաթողիկոսի հետ ավելի քան տասը տարի շարունակվող բանակցություններում կայսրության կողմից գլխավոր դեմքը Մանուել I Կոմնենոսն էր (1143—1180 թթ.), իսկ հայերի կողմից՝ Ներսես Դ Շնորհալին (1166—1173 թթ.): Այդ բանակցություններն սկսվել էին դեռևս Գրիգոր Գ կաթողիկոսի օրոք (1113—1166):

Այս հոգվածում մենք մտադիր չենք կանգ առնելու բյուզանդական և հայկական եկեղեցիների միջև տարվող բանակցությունների դավանաբանական կողմի, բանավեճերի էության, բյուզանդական կայսեր պատվիրակների և Հայ Եկեղեցու առաջնորդի միջև գնացած վեճերի վրա: Դրանք քիչ են տարբերվում, դրանից առաջ, 700 տարվա ընթացքում տեղի ունեցած վեճերից և որոնց մասին ավելի քան բավարար չափով գրվել է¹:

Ինչպես արդեն ասվեց, հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների նոր

¹ Մանրամասն մատենագիտությունը տե՛ս Լ. Չեֆյանի «Համամիութենական տրամախօսություն մը ԺԲ դարում» հոդվածը, Բազմավեպ, 1977, էջ 592, ծան. 1: Տե՛ս նաև Ա. Ա. Բոզոյանի «Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները XII դ. 60—70-ական թթ.», («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2 (այսուհետև՝ ՊԲ):

մրցափույի նախաձեռնողը Բյուզանդիան էր: Դեռևս եպիսկոպոս եղած ժամանակ Ներսես Ընորհալին, որ արդեն ճանաչված աստվածաբան էր, 1165 թ. Մամեստիայում Բյուզանդիայի փոխարքա Ալեքսիոսին ներկայացրեց Հայ Եկեղեցու «Մահմանք հաւատոյ»-ի բնագիրը, հասկանալի է, բյուզանդական արքուհիքի պահանջով: Ներսես Ընորհալու կազմած բնագրի պատասխանը եղավ Մանուել Կոմնենոս կայսեր 1166 թ. սեպտեմբեր ամսով թվագրված թուղթը, որ Գրիգոր կաթողիկոսին էր ուղարկվել բյուզանդական պալատական Սմբատի միջոցով, որը, դատելով անունից, ծագումով հայ էր: Նաևակում կայսրը հայոց կաթողիկոսին խնդրում էր Կոստանդնուպոլիս ուղարկել իր եղբայր Ներսես Ընորհալուն՝ հայտնի թեմայի շուրջ հետագա բանակցությունների համար: Սակայն այդ ժամանակ Գրիգոր կաթողիկոսն արդեն վախճանված էր, իսկ նրա Աթոռը ժառանգած Ներսես Ընորհալին բնականաբար չկարողացավ մեկնել կայսրության մայրաքաղաք: Իր պատասխանը կայսեր նամակին նա ուղարկեց վերոհիշյալ Սմբատի միջոցով: Այնտեղ նա շարադրում էր այն պատճառները, որոնք թույլ չէին տալիս նրան թողնելու Հռոմկյան, և խնդրում էր, որ Մանուել Կոմնենոսը կա՛մ մարդիկ ուղարկեր բանակցությունների համար, կա՛մ, եթե այդ հնարավոր է, ժամաներ ինքը, առանց դա նվաստացուցիչ բան համարելու: Կայսեր պատասխան նամակը Ներսեսին մեկ է հասել ինչպես հունարեն բնագրով, այնպես էլ հայերեն թարգմանությամբ, որ կատարվել էր հավանաբար ստացվելուց հետո՞, հայոց պատրիարքարանում: Մանուելը գովաբանում էր կաթողիկոսին եկեղեցիների միությանը նպաստելու նրա պատրաստակամության համար և հայտնում էր. «Ես Ձեր բերեպաշտությանն եմ առաքել թագավորությանս ծառա փիլիսոփա մագիստրոս Թեորիանոսին»² Փիլիպուպոսի հայկական վանքի վանահայր Ատմանի հետ, որոնք և տվյալ խնդրի վերաբերյալ կծանոթացնեն քեզ Սըրբապնագոյն Եկեղեցիով³ և թագավորությանս տեսակետին»: Կայսրը, ցանկանալով ընդգծել իր վստահությունը Թեորիանոսի և Ատ-

մանի նկատմամբ ու նրանց տրված մեծ լիազորությունները, հավաստիացնում էր Ներսես կաթողիկոսին, որ նա լիովին կարող է վստահել նրանց ասածների իսկությանը՝

Մանուելի նամակի մեկ հետաքրքրող մասի հայերեն թարգմանությունը համապատասխանում է հունարեն բնագրին: Հայերեն բնագրում չկա մագիստրոս Թեորիանոսին վերագրված «փիլիսոփա» բառը, «ἐν Φιλιππουπόλει» -ի փոխարեն գրված է «ἢ Φιλιππουπολιτεῶν» -ի փոխարեն՝ «ἐν Φιλιππουπόλει»⁴ («Ատմանի հետ»-ի փոխարեն՝ «ՎՅովհաննէս, մականուն Ութման»⁵, որից պարզ է դառնում, որ Ատմանը Փիլիպուպոլիսի վանքի վանահոր մականունն է, իսկ անունն է Հովհաննէս⁶:

Բնագրի հունարեն հրատարակության մեջ Մանուել Կոմնենոսի նաևակից հետո տրված է Թեորիանոսի և Ներսես կաթողիկոսի միջև տեղի ունեցած դավանաբանական վեճի հույժ մանրամասն տեքստը: Նշված տեքստի սկզբում Թեորիանոսը գրում է, որ աշխարհի արարչագործության 6678 թվականին (1170 թ.), Մանուել Կոմնենոսի թագավորության ընթացքներով տարում, երրորդ ինչիկոսին, մայիսի 15-ին Թեորիանոսը և Ատմանը ժամանեցին հայոց կաթողիկոսարան և կայսեր անունից ողջունելով հայոց կաթողիկոսին, նրան հանձնեցին կայսեր նամակը, որի մասին մենք արդեն հիշատակել ենք, չմոռնալով իրենց անվանել «կայսեր նվաստ ծառաներ»: Հաջորդում է բանավեճի բնագիրը:

Թեորիանոսը հայերեն չգիտեր, համենայն դեպս իրեն ներկայացնում էր որպես հայերեն չիմացող մարդ, Ներսես կաթողիկոսն ըստ երևույթին հունարեն լավ չգիտեր, կամ բնավ չէր տիրապետում այդ լեզվին: Այլպես չի կարելի բացատրել թարգմանչի առկայությունը բանակցություններում: Թեորիանոսը և Ատմանը նրան Միքայել են անվանում: Նա հոգևորական էր (երեց)⁷ և հավանաբար տեղացի չէր, այլ եկել էր Կոստանդնուպոլիսից: Անկասկած նա քաղկեդոնական էր, քանի որ Թեորիանոսի հետ Ներսեսի գաղտնի բանակցություններում վերջինս չէր ցանկանա իր մտադրություն-

² Ներսես Ընորհալու Վարդում «այս ոմն ճարտարաբան փիլիսոփայ արտաքին գրովք կրթեալ եւ եկեղեցական ուսմամբ ճոխացեալ»: Սրբոյն Ներսեսի Ընորհալոյ Պատմութիւն վարուց, Սոփերք հայկականք, և. ԺԴ, Վեների, 1854, էջ 75: Նրա մասին համառոտ հիշատակում է նաև Միքայել Ասորի. Michel le Syrien, Chronique, ed. J.—B. Chabot, t. III, Paris, 1905, p. 335—336.

³ Այսինքն՝ արևկյան-ուղղափառ, ավելի ճշգրիտ՝ Կոստանդնուպոլիսի բարձր հոգևորականության:

⁴ „Theorani Orthodoxi Disputatio cum Armeniorum Catholico“, Mtgne, Patrologia graeca, t. 133, col. 120 (այսուհետև՝ Disputatio):

⁵ Քանի որ բնագրում Հովհաննեսը կոչվում է Ատման, և ոչ ինչպես հայերեն թարգմանության մեջ՝ Ութման, այս հոգվածում մենք նրան Ատման կանվանեց:

⁶ Ներսես Ընորհալի, Թուրք ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 144: (այսուհետև՝ Թուրք ընդհանրական):

⁷ Disputatio, col. 233, հմմտ. col. 236.

ներն արտահայտել հայ դավանանքի պատկանող մարդու ներկայությամբ: Ինչպես նշում էր Թեոդորանոսը, թարգման Միքայելը ոչ միայն հմուտ չէր հունարենի քերականությանը, այլ վատ էր տիրապետում նույնիսկ խոսակցական հունարենին⁸: Վերը շարադրվածից ելնելով պետք է ենթադրել, որ Միքայել թարգմանը հայ էր: Հարց է ծագում. չէ՞ որ Հովհաննես Ատմանը հիանալի գիտեր թե՛ հայերեն, թե՛ հունարեն, ինչո՞ւ նա չէր ստանձնել թարգմանի դերը, մի՞թե դա նվաստացուցիչ էր նրա համար, կամ դրա տակ ավելի լուրջ բա՛ն կար թաքնըված: Հայտնի է, որ Մանուել կայսերը գրած Ներսես կաթողիկոսի պատասխան նամակը հունարեն է թարգմանել, ընդ որում փայլուն է թարգմանել հենց Հովհաննես Ատմանը: Այդ նշանակում է, և դրանում մենք կհամոզվենք ստորև, որ Ներսեսի և Թեոդորանոսի միջև բանակցությունները տեղի էին ունենում Ատմանի բացակայությամբ: Ներսեսի համար ցանկալի չէր, որ Ատմանը իրավեկ լինի իր գաղտնի բանակցություններին:

Թեոդորանոսն այդ բանավեճին վաղուց էր պատրաստվել: Եթե հավատանք նրան, Ներսես կաթողիկոսը բանակցությունների ժամանակ նշել է, որ Թեոդորանոսը, ինչպես երևում է, երկար տարիներ եկեղեցու հայրերի տարբեր գրքերից նյութեր է քաղել հիմնավորելու համար Քրիստոսի երկու բնության մասին քաղկեդոնականների գլխավոր դրույթը⁹: Ասել է Ներսեսն այդ, թե ոչ, նշանակություն չունի, քանի որ իրականում այլ կերպ չէր կարող լինել: Մանուել կայսրը Հռոմկյա չէր ուղարկի աստվածաբանության անտեղյակ կամ ոչ լավատեղյակ մարդու:

Բանավեճի հայերեն բնագիրը չի պահպանվել, և եթե հավատանք Թեոդորանոսի կազմած բնագրին, Հռոմկայում նա փայլուն հաղթանակ է տարել, հակելով կաթողիկոսին ընդունելու Քաղկեդոնի ժողովի որոշումները, և բանավեճին ներկա գտնվող Ներսեսի եղբորորդի Գրիգոր եպիսկոպոսը (ապագա Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը) նույնիսկ բացակասել է. «Ես հոռու եմ¹⁰, նպոյալ լինի նա, ով չի ընդունում Քրիստոսի երկու բնության դրույթը»¹¹:

Թեոդորանոսն այնուհետև գրում է, որ Ներսես կաթողիկոսը իրեն հանձնարարել է կայսերը հանձնել կնքած գաղտնի նամակ, ըստ որի նա ընդունում է Քաղկեդոնի ժողովի

որոշումները¹², և որ կաթողիկոսը նախապես իրեն՝ Թեոդորանոսին ծանոթացրել է այդ գաղտնի նամակի բովանդակությանը:

Տարօրինակն այն է, որ գաղտնի նամակի և նրա բովանդակության մասին Ներսես կաթողիկոսը չի տեղեկացրել Հովհաննես Ատմանին՝ իր «ազգակցին ու հավատակցին» (ὁμόφυλος καὶ ὁμόπιστος), ինչպես նրան անվանում է Ներսեսը: Կաթողիկոսը չէր ցանկացել, որ Հովհաննես Ատմանն իմանար, որ նա հրաժարվելով հայկական դավանանքից ընդունել էր Չորրորդ Տիեզերական ժողովի դավանանքը: Ինչո՞ւ: Միակ բանական պատասխանը կլիներ այն, որ Ներսես կաթողիկոսը Ատմանին միաբնակ էր համարում: («Համակրոս մեզ» — «ὁμόπιστος ἡμῶν»), թեև, ինչպես մենք կհամոզվենք ստորև, նա պարզապես իրեն միաբնակ էր ներկայացնում, ասենայն հավանականությամբ, Ներսեսի վստահությունը շահելու համար:

Մանուելին ուղարկված՝ Ներսեսի գաղտնի նամակը միակը չէր: Ըստ երևույթին նա կայսերը նույնանման նամակ էր ուղարկել նաև իր հավատարիմ անձանց միջոցով: Իր երկրորդ նամակում, որը հայոց կաթողիկոսի գաղտնի նամակի պատասխանն էր, Մանուելը պարկրոշ նշում է, որ ստացել է «առ ի քէն առաքեալ գիր թագաւորութեանս իմոյ ընդ արս պատուականութեան քո»¹³: Այդ մարդիկ հունարեն բնագրում կոչվում են «*βραχάρτοι*»¹⁴, հետևաբար նրանք պատկանել են Բյուզանդիայում X դարից հայտնի Վահրամյանների նշանավոր ընտանիքին: Այդ ընտանիքին էր պատկանում նաև հռչակավոր Փիլարտոս Վարաժնունին¹⁵:

Վերադառնանք սակայն Հովհաննես Ատմանի անձնավորությանը: Մանուել կայսերը գրած Ներսես կաթողիկոսի նամակի հայերեն բնօրինակում նա կոչվում է «համագցի մեր և համակրոս Յովհաննես հայր վանաց»¹⁶: Ներսես կաթողիկոսի այդ նամակի հունարեն թարգմանության մեջ, որ կատարել է ինքը՝ Հովհաննես Ատմանը, մեկ հետաքրքրող հատվածում ասվում է. «ὁ ὁμόφυλος καὶ ὁμοσχίμων ἡμῶν Ἰωάννης ὁ ἡγούμενος, ὃς καὶ Ἄτμινος ἐπιστομᾶτα»¹⁷, Հունարեն բնագրի տարբերությունն այն է, որ բերվում է Հովհաննեսի մականունը՝ Ատման: Բայց ոչ միայն

¹² Նույն տեղում, սյուն. 212:

¹³ Թուղթ ընդհանրական, էջ 154:

¹⁴ Disputatio. col. 213.

¹⁵ Նրանց մասին տե՛ս А. П. Каждан, Армяне, в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975, с. 25—28.

¹⁶ Թուղթ ընդհանրական, էջ 146:

¹⁷ Disputatio, col. 213.

⁸ Նույն տեղում, սյուն. 124:

⁹ Նույն տեղում, սյուն. 144:

¹⁰ Այսինքն՝ քաղկեդոնական, երկաբնակ:

¹¹ Disputatio, col. 148. 2մմ. col. 149.

այդ: Հայերեն բնօրինակի «համակրօս» բառը փոխարինված է «*ομοσχημων*» («համապետ», այսինքն՝ կրոնավորի սքեմով, ինչպես և մենք)՝ ի տարբերություն Թեոդիանոսի, որը աշխարհիկ մարդ էր: Կասկած չկա, որ Բյուզանդիայի արքունիք ներկայացված՝ Ներսեսի նամակի տվյալ բառի փոխարինումը անշուշտ նույն այդ Ատմանի ձեռքի գործն է: Ատմանը լավ գիտեր, ինչպես և Բյուզանդական կայսրության բարձր շրջանները, որ նա ո՛չ կաթողիկոսի, ո՛չ էլ առհասարակ հայերի «հավատակիցը» չէ, մի բան, որ հայտնի չէր Ներսեսին: Ներսեսը վախենում էր Ատմանին հայտնել Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելու իր վճռի մասին, քանի որ ենթադրում էր, թե Ատմանը այդ մասին կարող էր հայտնել հայ հոգևորականության և հասարակության ավելի լայն շրջանակների:

Բայց ո՞րն էր Հովհաննես Ատմանի առաքելությունը: Պատահականությո՞ւն է արդյոք, որ Մանուել Կոմնենոսը նրան էր վստահել այդպիսի կարևոր ու պատասխանատու հանձնարարություն: Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել Ներսես կաթողիկոսի հետ Թեոդիանոսի երկրորդ բանավեճի բնագրում. բանավեճը տեղի էր ունեցել Հռոմ-կայսրա, երբ Թեոդիանոսն ու Ատմանը աշխարհի արարչագործության 6680 թ. (1172 թ.), հինգերորդ ինդիկտիոնին կրկին հայոց կաթողիկոսարան էին ժամանել Կոստանդնուպոլսից: Մանուել Կոմնենոսի պատվիրակները Ներսես կաթողիկոսին հանձնել էին Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայելի նամակը, ինչպես նաև Բյուզանդիայի կայսեր երկու նամակները, մեկը գաղտնի (*μυστική του βασιλέως γραφή*), մյուսը՝ բաց (*φανερή*)¹⁸: Հայերեն թարգմանությամբ պահպանվել է Մանուելի բաց նամակի բնագիրը¹⁹: Գաղտնի նամակում կայսրը ողջունում է Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելու՝ Ներսես կաթողիկոսի պատրաստակամությունը և նշում, որ Եկեղեցիների միությանը նպաստելու համար նա ուղարկել է մեկ արդեն հայտնի Թեոդիանոսին ու Ատմանին²⁰: Կայսեր գաղտնի նամակում Ատմանի անվան հիշատակումը բյուզանդական դիվանագիտության վրիպումն էր, թե, ընդհակառակն, ջանտաժ, դժվար է ասել: Հայտնի է միայն, որ Ներսես կաթողիկոսը, իմաստով, որ Ատմանը տեղյակ է Քաղկեդոնի ժողովի որոշումներն ընդունելու իր մտադրությանը, բռնկվել է վայրույթով: Երբ Միքայելը թարգմանել է կաթողիկոսին Մանու-

ելի գաղտնի նամակի բնագիրը, Ներսեսը բացականչել է. «Բայց [իմ] գաղտնիքը²¹ Ատմանը չգիտեր, ինչպես է [Մանուելի] նամակում հիշվում նրա անունը»²²: Դրան թարգման Միքայելը պատասխանել է. «Թագավորի կամքն է, որ նա էլ տեղյակ լինի գործին, ինչպես և փիլիսոփան [Թեոդիանոսը]: Կաթողիկոսը, լսելով այդ, խոր հոգոց հանեց, բայց այն ժառանակ լռեց»²³:

Ներսես կաթողիկոսին կայսեր գրած բաց նամակում ասված է, որ Կոստանդնուպոլսից Հռոմկա «առաքեցան արդև առ քո ըստ Աստուծոյ սրբավնութիւնդ՝ լիճ թագաորութեան մերոյ՝ այրդ Թեոդիանէ Մայիստո, և հայրդ որ ըստ Փիլիպուպոլսեաց հայ [ր]»²⁴ վանից Յովհաննես անուն»²⁵:

Այն բանից հետո, երբ Ներսես կաթողիկոսին հայտնի դարձավ, որ Հովհաննես Ատմանը տեղյակ է իր գաղտնիքին, իսկ իրերի այդպիսի շրջադարձը ըստ երևույթին ձեռնդրու էր բյուզանդական արքունիքին՝ կաթողիկոսին դավանափոխ ներկայացնելով, հայերի աչքում նրան սևացնելու և այդպիսով նրան կատարված փաստի առաջ կանգնեցնելու նպատակով, Հովհաննես Ատմանը անցնում է բացահայտ շանտաժի: Դիմելով Ներսեսին, նա ասում է. այն, ինչ կաթողիկոսը գաղտնիք է համարում, հայտնի է ամբողջ հոռոմների երկրին (այսինքն՝ Բյուզանդական կայսրությանը—Հ. Բ.), քանի որ այդ մասին Թեոդիանոսը գրել ու հանդես է եկել պալատում և բյուզանդական բարձր հոգևորականության ժողովում, և որ Թեոդիանոսի կապեժած հաշվետվությունը բազմացվել է ավելի քան հարյուր օրինակով և տարածվել ամբողջ հոռոմների երկրով: Եվ,

²¹ Գաղտնիքն այն մասին, որ Ներսեսը հարել է քաղկեդոնականներին:

²² *Disputatio*, col. 236.

²³ Նույն տեղում:

²⁴ Այստեղ առկա է հրատարակիչների կողմից չնկատված՝ գրչի սխալը: Պետք է լինի «հայ վանից», ինչպես հունարեն բնօրինակում է՝ *Ἀρμενιζης μονης*. Գրիչը վերևում հիշատակված «հայր», այսինքն՝ «հայր վանաց» բառի աղբեցությամբ վանքի ազգային պատկանելությունը նշող «հայ» բառի փոխարեն մեխանիկորեն կրկնել է «հայր»: Այսպիսով հայրը (վանաց) կրկնվում է երկու անգամ: Այն մասին, որ մեր ուղղումը ճիշտ է, վկայում է ոչ միայն այդ նամակի հունարեն բնօրինակի համապատասխան տեղը, այլև Մանուելի անաջին թղթի բնագիրը: Այնտեղ ասված է. «*ὁ καθ' ἡσούμενος τῆς Ἀρμενιζης μονης ἐν Φιλιππουπόλει*» (սյուն. 120): Հայերեն թարգմանության մեջ՝ «վայր վանաց հայր» որ ի Փիլիպուպոլսեաց աշխարհէն» (Թուրք ընդհանրական, էջ 144):

²⁵ Թուրք ընդհանրական, էջ 155:

¹⁸ Նույն տեղում, սյուն. 236:

¹⁹ Թուրք ընդհանրական, էջ 154—156:

²⁰ *Disputatio*, col. 233.

վիրավորվածի կեցվածք ընդունելով, ավելացնում է, որ ոչ թե կաթողիկոսը, այլ ինքը՝ Ատմանը պետք է նեղանա, քանի որ Ներսեսը նրանից՝ իր «ազգակցից ու հավատակցից» (*ὁμόφυλον καὶ ὁμόπίστον*) թաքցրել է մի գաղտնիք, որը վստահել է «այլազգի» (*ἀλλογενεὶ ἀνόρι*), այսինքն՝ հույն Թեորիանոսին²⁶:

Բայց Հովհաննես Ատմանը դրանով չի բավարարվում: Նա շարունակում է իր շանտաժը, և հայ բարձր հոգևորականության առաջ ասում, որ Ներսեսը իսկապես գրել է կայսերը, թե ընդունում է Քաղկեդոնի ժողովի որոշումները²⁷: Իսկ Թեորիանոսը ժխտում է, որ կայսեր պատում հրապարակավ հանդես է եկել և հայտնել Ներսեսի գաղտնի մտադրությունները, այլ կաթողիկոսի գաղտնիքը, ինչպես այդ պահանջել էր Ներսեսը, հաղորդել է անձամբ կայսերը, նրան հանձնելով կնքած նախակը, և որ այդ պահին թագավորի մոտ էր միայն լոգոթետը: Ներսեսի գաղտնիքը, ասում է Թեորիանոսը, իրավասու էր հայտնել կայսրը ինչպես Եկեղեցուն, այնպես էլ Սեեսաոսին²⁸:

Ներսեսը ստիպված էր հայ բարձր հոգևորականության առաջ ժխտել Հովհաննես Ատմանի ասածը և հանդես գալ Չորրորդ Տիեզերական ժողովի որոշումների դատապարտությամբ: Բանակցությունները բյուզանդական կայսեր պատվիրակների հետ մի քանի օրով ընդհատվեցին: Բայց, վերսկսվելով, նրանք ոչ մի արդյունքի չհանգեցրին: Մանուելի պատվիրակներն ստիպված եղան ճանապարհ ընկնել, և Հայոց Եկեղեցու միությունը բյուզանդականի հետ չկայացավ, Թեորիանոսի և Ատմանի առաքելությունն ավարտվեց շունդալից տապալումով: Հայտնի է, որ 1177 թ. Մանուելը մի անգամ ևս փորձեց հասնելու երկու Եկեղեցիների միությանը, բայց բյուզանդական կողմից բանակցություններին չէին մասնակցում ո՛չ մագիստրոս Թեորիանոսը, ո՛չ Հովհաննես Ատմանը: Ոչ այն պատճառով, որ, ինչպես կարծում է Մաղաքիա Օրմանյանը, այդ ժամանակ նրանք ըստ երևույթին կենդանի չէին²⁹, այլ այն պատճառով, որ նրանց

այլև չէր կարելի վստահել այդ պատասխանատու առաքելությունը:

Մենք արդեն նշել ենք, որ Մանուելի և Ներսեսի բանակցությունները քաղաքական դրդապատճառներ ունեին: Չի կարելի անշուշտ հաված յուրի տեղ ընդունել և հայոց կաթողիկոս Ներսեսի համաձայնությունը՝ հրաժարվելու հայկական դավանանքից և միանալու բյուզանդական Եկեղեցու հետ: Դա ոչ այլ ինչ էր, քան անհրաժեշտ քայլ, որի կոնկրետ դրդապատճառները դեռևս հայտնի չեն: Հնարավոր է, կաթողիկոսն այդ ճանապարհով ուղում էր կանխել Մանուել Կոմնենոսի քաղաքական և ռազմական էքսպանսիան դեպի Հայկական Կիլիկիա: Ինքը Թեորիանոսը պարզորոշ գրում է. որ Բյուզանդիայում ոչ ոք չէր հավատում, թե Ներսես կաթողիկոսն անկեղծորեն ձրգտում է Եկեղեցիների միությանը: Բյուզանդիայում, գրում է Թեորիանոսը, «գրեթե բոլորը, բացի թագավորից, ասում էին, որ կաթողիկոսն անկեղծ մարդ չէ, նա երբեք չի համաձայնի միությանը»³⁰:

Այժմ դառնանք մեր հոդվածի հիմնական նպատակին՝ հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների մեջ Հովհաննես Ատմանի տեղի ու դերի բացահայտմանը: Վերը շարադրվածից արդեն պարզ է դառնում, որ Փիլիպուպոսի հայկական վանքի վանահայր Հովհաննես Ատմանը ոչ այլ ոք էր, քան պարզապես Ներսես կաթողիկոսի վստահությունը շահած՝ բյուզանդական կառավարության սովորական գործակալ: Նրա խնդիրն այն էր, որ բացահայտի կաթողիկոսի մտադրությունները, հայտնի դրանք Թեորիանոսին, որպեսզի սա ավելի հանգամանորեն կարողանա կառուցել իր պատասխան քայլերը կաթողիկոսի հետ ունեցած բանավեճի մեջ³¹: Նշենք, որ հայոց Ներսես կաթողիկոսի հետ տարվող բանակցությունների մեջ Հովհաննես Ատմանը Թեորիանոսի գլխավորած «պատվիրակության» միակ մասնակիցն էր, իսկ Թեորիանոսը ոչ թե շարքային անձնավորություն էր, այլ բյուզանդական արքունիքի խոշոր դեմքերից, մագիստրոսի բարձրագույն տիտղոսին արժանացած հայտնի աստվածաբան, որ վայելում էր Մանուել Կոմնենոս կայսեր և Կոստանդ-

²⁶ Disputatio, col. 248.

²⁷ Նույն տեղում, սյուն. 248: Ղ. Ալիջանը կարծում է, թե Հովհաննես Ատմանը Ներսեսի գաղտնիքը հայտնել է «միամտաբար» («Պարզամիտն Ութման») — Ղ. Ալիջան, Ընդհանուր և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 428:

²⁸ Disputatio, col. 249.

²⁹ Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1465:

³⁰ Disputatio, col. 249.

³¹ Միամիտ են ինչում Մաղաքիա Օրմանյանի խոսքերը. «Ութմանի բռնած դիրքը չէ ճշդուած, բայց Հայոց կողմ եղած պետք է ըսել, քանի որ Ներսես պայն կկոչէ համազգի մեր եւ համակրողն»: (Ազգապատում, մասն Ա, էջ 1420). «համակրոս» բառը նա ուղղում է «համակրողն», թեև Ներսես Ընդհանուր թղթերի բոլոր հրատարակությունների մեջ առկա է «համակրոս» և ոչ թե «համակրող»:

նուպոյսի պատրիարք Միքայելի արտակարգ լիապտություններին: Այդ հանգամանքը կողմնակիորեն շեշտում է և իր՝ Հովհաննես Ատմանի կշիռը: Նա պետք է որ բյուզանդական արքունիքին և Կոստանդնուպոլսի պատրիարքարանին հայտնի գործիչ լիներ: Նրա անձնավորության հետ ուղղակի կապ ունի այն հանգամանքը, որ նա Փիլիպուպոյսի հայկական վանքի վանահայրն էր: Իրավացի հարց և միաժամանակ տարակուսանք է ծագում. «ի՞թե ամբողջ ընդարձակածավալ Բյուզանդական կայսրության մեջ ուրիշ հայկական վանք չկար, որ կայսրն ու պատրիարքը դիմել էին **հատկապես այդ**, և ոչ թե մի այլ վանքի ծառայությանը: Երբ Թեոդիանոսը գրում է «*τῆς ἀρμενιζῆς μὲν ἔστιν ἐν Φιλιπποπόλει*» (Փիլիպուպոյսի հայկական վանքի), նա ճշգրիտ նշում է, որ Փիլիպուպոյսի հայկական վանքը **մեկն է**, ուրիշ հայկական վանք այնտեղ չկա, այլապես նա կճշտեր, թե Փիլիպուպոյսի հատկապես ո՞ր հայկական վանքը նկատի ունի: Եթե նույնիսկ ընդունենք, որ Փիլիպուպոյսում այդ ժամանակ ուրիշ հայկական վանքեր էլ կային, այն փաստը, որ Թեոդիանոսը չի ճշտում, թե հատկապես ո՞րը, մատնանշում է այդ քաղաքի և բանակաթեմի ամենահայտնի հայկական վանքը³²:

Էթնիկական և սոցիալական տեսակետից ի՞նչ էին ներկայացնում իրենցից Փիլիպուպոյսն ու Փիլիպուպոյսի բանակաթեմը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում:

Աննա Կոմնենան ավարտել է իր «Ալեքսիական»-ը 1148 թ.³³, այսինքն՝ Եկեղեցիների միության մասին Հռոմկլայում հայ-բյուզանդական երկխոսության սկզբից երկու տասնամյակ առաջ: Իր հոր՝ Ալեքսիոս I Կոմնենոսի (1081—1118 թթ.) ժամանակվա իրադարձությունները նկարագրելիս նա նշում է, որ Փիլիպուպոյսի ամբողջ բնակչությունը, քչերից բացի, բաղկացած է, «մանիքեցիներից», այսինքն՝ պավլիկյաններից ու թոնդրակեցիներից (հայերից), որոնք բռնանում էին տեղացի քրիստոնյաների, ամենայն հավանականությամբ, քաղկեդոնական հույների վրա: Եարունակելով իր պատմությունը, նա ամեն ինչ ներկայացնում է ավելի մոռյալ գույներով. Փիլիպուպոյսի ամբողջ շրջանը (*τῶν περὶ Φιλιπποπόλεως*) բնակեցնում էին հերետիկոսները: Սրանց թվին նա դասում է հայ միաբնակներին և

հակոբեիկ ստորիններին: Ցանկանալով մի ավելորդ անգամ գովաբանել իր հորը՝ Ալեքսիոս Կոմնենոսին, նա գրում է, թե նրան հաջողվել է բավաթիվ «մանիքեցի» հերետիկոսների դարձնել ուղղափառությամբ³⁴: Բայց հապիվ թե Փիլիպուպոյսում իր կարճատև կանգ առնելու ընթացքում կայսեր հաջողվեր ինչ-որ բանի հասնել: Այդպիսի կրակացության են բերում Փիլիպուպոյսում մեկ հարյուրամյակ անց տեղի ունեցած իրադարձությունները: Խաչակրաց երրորդ արշավանքը գլխավորած Փրիդերիկոս Շիկամորուսը 1189 թ. օգոստոսի 24-ին մտավ Փիլիպուպոյս: Ունևոր բնակիչները լքել էին քաղաքը, այնտեղ էին մնացել միայն չքավոր հույներն ու **հայ-միաբնակները**³⁵: Դա վկայում է այն մասին, որ Փիլիպուպոյսում և նրա շրջակայքում հայ քաղկեդոնականներ չկային, համենայն դեպս, եթե նույնիսկ կային, ապա այնպիսի չնչին քանակով, որ աղբյուրներն այդ մասին ոչինչ չեն հայտնում: Ընդհակառակն, հավաստի տվյալներ կան այն մասին, որ Փիլիպուպոյսում հատկապես այդ ժամանակ հայ միաբնակներն սկսել էին ենթարկվել հայաժանաբների, տեղի եպիսկոպոսը սկսել էր հայ միաբնակներին բռնի քաղկեդոնական դարձնել³⁶, որի դեմ բողոք է հայտնում Գրիգոր Դ Տղա հայոց կաթողիկոսը³⁷:

Վերոգրյալից բխում է, որ եթե նույնիսկ ընդունենք Փիլիպուպոյսում հայկական վանքերի գոյությունը, ապա դրանք պետք է միաբնակ վանքեր լինեին: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայ հերետիկոսները (պավլիկյաններ, թոնդրակեցիներ) չէին կարող վանքեր ունենալ, քանի որ նրանք ընդհանրապես դեմ էին վանքերին ու եկեղեցուն որպես հիմնարկությունների:

Իսկ Փիլիպուպոյսի **հայկական վանքի վա-**

³⁴ Anne Comnène. Alexiade, ed. B. Leib, t. III, Paris, 1945, p. 180—182.

³⁵ Nicetae Choniatae Historia, rec. I. A. Van Dieten, Berolini et Novi Eboaci, 1975, p. 403.

³⁶ Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին: «Բանբեր Մատենադարանի» № 4, 1958, էջ 286—287:

³⁷ Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 133: Հայկական աղբյուրներում Գրիգոր Դ-ը հիշատակվում է Տղա մակառուտով: Թեոդիանոսը թարգմանել է *Μετρός* («կրտսեր») (այլու. 248), և ճիշտ վարվել: Այդպիսով Գրիգոր Դ կաթողիկոսը տարբերվում էր Գրիգոր Գ-ից: Թեոդոսիոս II կայսրն էլ աղբյուրներում հիշատակվում է որպես *Μετρός*: Թեոդոսիոս I-ից տարբերվելու համար: Թեոդոսիոս *Μετρός*-ը վախճանվել է 50 տարեկան հասակում:

³² Մանուել Կոմնենոսի նամակի հայերեն թարգմանության մեջ *Φιλιπποπόλεως*-ի փոխարեն գրված է «Փիլիպուպոյսեաց աշխարհ», այսինքն՝ փիլիպուպոյսեցիների շրջան, բանակաթեմ:

³³ K. Krumbacher, Geschichte der byzantinischen Literatur, München, 1897, S. 274.

նահայր քաղկեդոնական Հովհաննես Ամամը:

Այս հողվածի սկզբում մենք նշեցինք, որ Մանուել Կոմնենոսը հայ միաբնակ և բյուզանդական-քաղկեդոնական Եկեղեցիների միության մասին բանակցություններ վարելու համար չէր կարող դիմել հայկական դավանանքի տեր հոգևորական անձնավորության ծառայություններին: Հովհաննես Ամամը, որ թեև հայոց կաթողիկոսին էր ներկայացել որպես հայ դավանանքի տեր մարդ³⁸ (հիշենք «համակրոս» բառը Ներսես կաթողիկոսի թղթում), բայց նամակի հունարեն թարգմանության մեջ, որ կատարել էր ինքը, *ὁμοπίστεως* բառը փոխարինել էր *ὁμοσεχίμωνον*, դրանով ընդգծելով, որ ինքը դավանակից չէ հայոց կաթողիկոսին:

Բայց Հովհաննես Ամամը Փիլիպուպոսի հայկական վանքի վանահայրն էր: Նշանակում է, այնուամենայնիվ, Փիլիպուպոսում այդ ժամանակ գոյություն ուներ հայ քաղկեդոնական վանք և ոչ թե շարքային, այլ բյուզանդական կառավարության ու Եկեղեցուն իր գործունեությամբ քաջ հայտնի մի վանք: Այդպիսին կարող էր լինել միայն Փիլիպուպոսի բանակաթեմում³⁹ Պետրիցոս (Բաչկովո) ավանում Արևևտքի մեծ դոմեստիկոս հայ-քաղկեդոնական Գրիգոր Բակուրյանի հիմնած սուրբ Աստվածածնի վանքը: Հովհաննես Ամամը ոչ այլ ոք էր, քան այդ վանքի վանահայրը:

Ն. Մառը հայ քաղկեդոնականներին նվիրված իր նշանակալից աշխատության⁴⁰ մեջ մանրամասն կանգ է առել ինչպես «հայ-քաղկեդոնական»⁴¹ Գրիգոր Բակուրյանի անձնավորության, այնպես էլ Փիլիպուպոսում նրա կառուցած վանքի վրա: Եջտեղով բյուզանդական կառավարության կողմից վանքին տրված չափապանց մեծ, բացառիկ արտոնությունները, Ն. Մառը, դրա համար բոլոր հիմքերն ունենալով, կասկածում էր, թե այդ բանը կապված լիներ միայն բյուզանդական կառավարության առաջ Գրիգոր Բակուրյանի անձնական ծառայություններով, «որքան էլ դրանք մեծ լինեին»⁴²: Եվ

հարց է տալիս. «Արդյոք կայսրության քաղաքականությունը հույներ չէ՞ր կապում Պետրիցոսի վանքի, որպես Բուլղարիայի տեղական կյանքի ցավոտ հարցերի լուծման աջակցի հետ: Այդպիսի իսկապես ցավոտ հարցերից մեկը տեղում պավլիկյանությունն էր»⁴³:

Սակայն հայ-քաղկեդոնականները, և ոչ միայն Փիլիպուպոսի վանքի, բյուզանդական կառավարության կողմից օգտագործվում էին առաջին հերթին հենց միաբնակների դեմ մղված պայքարում: Ն. Մառը բերում է Գրիգոր Բակուրյանի ժամանակակից հույն Նիկոն Սկեռնցու վկայությունը, որը, նկատի ունենալով հայ քաղկեդոնականներին, գրում էր. «Մեր այդ եղբայրներին, եթե նրանց մեջ աստվածային բանականությամբ մեկը հայտնվի, մինչև այսօր էլ մեր հայրերն ու պատրիարքները օգտագործում են Աստծո օգնությամբ թշնամիների դեմ պայքարելու համար, երբ ծողովի ժամանակ որևէ բան է հարուցվում հայ երեւոյկոսների (այսինքն՝ միաբնակների—< Բ.) դեմ, քանի որ նրանք հմուտ են նրանց լեզվին և գրվածքներին»⁴⁴:

Վկայությունն ապեցուցիչ է: Եթե Նիկոն Սկեռնցին ապրելիս լիներ մեկ հարյուրամյակ հետո, մեկ կթվար, թե նա նկատի ունի Միքայել պատրիարքին և վանահայր Հովհաննես Ամամին:

Փիլիպուպոսի սբ. Աստվածածնի վանքի հիմնադրման քաղաքական ու դավանաբանական դրդապատճառների մասին Ն. Մառի ենթադրությունը շատ կողմնակիցներ է գտել⁴⁵:

Պետրիցոսի վանքը, պետք է ենթադրել, վատ չէր կատարում իր առջև դրված խընդիրները: Դրա լավագույն վկայությունն է այն, որ գրեթե մեկ հարյուրամյակ հետո բյուզանդական կառավարությունը Հայ Եկեղեցու հետ իր բանակցությունների ընթացքում դիմել է հատկապես այդ վանքի հոգեվորականության ծառայությանը, քանի որ, Նիկոն Սկեռնցու խոսքերով ասած, նրա վանահայրը, «հմուտ էր հայերի լեզվին ու գրվածքներին»:

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում

³⁸ Այդ անկասկած է: Չէ՞ որ նա ասել էր կաթողիկոսին, թե սա, իրենից՝ «համակրոսի և համակրոսի» Ամամից թաքցրել է իր գաղտնիքները:

³⁹ Հմմտ. Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ում (I, § 3). Նրա վանքը կառուցվել է *ἕνεκα τῆς Φιλιστοπούλεως*: Տե՛ս նաև այս հողվածի 32 ծան.:

⁴⁰ Н. Марр, Аркауя, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах (отдельный оттиск из «Византийского временника», т. XII, 1905).

⁴¹ Նույն տեղում, էջ 25:

⁴² Նույն տեղում:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում, էջ 35—36. ընդգծումը մերն է—< Բ.:

⁴⁵ Տե՛ս օր. Вс. Николаев, Един феодален институт от XI век в нашите земи със специално предназначение. Манастирът на Григорий Бакуриани (Пакуриан)—средиче на византийски прозелитизъм между пловдивските армено-павликени („Известия“ на Института за българска история, София, 1951, № 1—2).

շատ է գրվել Պետրիցոսի վանքի և նրա հիմնադրի ազգային պատկանելության մասին⁴⁶: Այստեղ ավելորդ է այդ հարցի վրա մանրամասն կանգ առնել: Նշենք միայն, որ արտահայտվել է հիմնականում երկու իրարամերժ կարծիք: Հայագետները գտնում են, որ Բազկովոյի վանքը կառուցվել է հայ քաղկեդոնական Գրիգոր Բակուրյանի կողմից, և որ այդ վանքը հայ քաղկեդոնական է: Իրենց եզրակացությունը հիմնավորելու համար ներքանք վկայակոչում են ինչպես արդեն Ն. Մառի բերած կովանները (Աննա Կոմնենայի տվյալները Գրիգոր Բակուրյանի հայ լիւնելու մասին, Փիլիպոսպոլսի վանքի կանոնադրության հունարեն բնագրի տակ նրա

⁴⁶ Պ. Մորադյան, Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների գնահատության հարցի շուրջը, ՊԲՀ, 1968, № 1: А. Шанидзе, Великий домашик Запада Григорий Бакурианис-дзе и грузинский монастырь, основанный им в Болгарии, Тбчлис, 1970; его же, Грузинский монастырь в Болгарии и его Типик, Грузинская редакция Типика, Тбилиси, 1971. P. Lemerle, Cinq Etudes sur le XI^e siècle byzantin, Paris, 1977, p. 113—191: P. М. Бартиян. Об армянской памятной записи в грузинской рукописи, содержащей Типик Григория Пакуриана (<ՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 7), его же, Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրության» մեջ հիշատակվող *ἀνίδρουτον εἰληος*-ի («անկայուն ժողովրդի») մասին (<ՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 7): Типик Григория Пакуриана, Введение, перевод и комментарий В. А. Арутюновой-Фиданян, Ереван, 1978. В. А. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.), Ереван, 1980; Н. Ломоури, К истории грузинского Петрицонского монастыря (Бачковский «монастырь» в [Болгарии]), Тбилиси, 1981.

հայերեն ստորագրությունը, Գրիգոր Բակուրյանի ազգականների թվում հայ միաբնակների հիշատակումը, Վանքի Կանոնադրության հայերեն բնագրի հիշատակումը), այնպես էլ ուրիշների հայտնաբերած փաստերը: Վրացագետներն, ընդհակառակը, հենվելով Կանոնադրության տվյալների վրա, որոնց համաձայն Բակուրյանն իրեն «իվերացի» է կոչում, իսկ վանքը՝ «իվերական», եկել են այն եզրակացության, որ Բազկովոյի վանքը վրացական է, իսկ նրա հիմնադիրը՝ վրացի: Ավելորդ չէ այստեղ մեկ անգամ ևս նախադառնալ Ն. Մառի համոզիչ եզրակացությանը, որ «իվերացի» բառը Գրիգոր Բակուրյանի բերանում «պուտ մշակութային նշանակություն ուներ»⁴⁷, որ «ամեն մի հայ քաղկեդոնական, նույնիսկ եթե ավելի հուտ էր հայերենին, քան վրացերենին, իր պատկերացմամբ վրացի էր՝ պտարյուն վրացիներին համահավասար»⁴⁸:

Ն. Մառի եզրակացությունները մի անգամ ևս հաստատվում են Մանուել Կոմնենոսի նամակագրությամբ Ներսես Շնորհալու հետ: Պետրիցոսի վանքն այդ նամակագրության մեջ անվանված է *Ἀρμενική μονή* (հայկական վանք): Ով-ով, բայց Բյուզանդիայի կայսրն ու Կոստանդնուպոլսի պատրիարքը չէին կարող սխալվել:

Այդ վանքի վանահայրը հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու «համազգին» էր: Պե՛տք է արդյոք կասկածել, թե Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսեսը հայ էր: Այդ իր հերթին չի՞ վկայում արդյոք այն մասին, որ Պետրիցոսի վանքի ղեկավարությունը XII դարում, այսինքն նրա հիմնադրումից զրեթե մեկ հարյուրամյակ հետո գտնվում էր հայ քաղկեդոնական վանահոր ձեռքում:

⁴⁷ Н. Мара, *ibid.*, աշխ., էջ 21:

⁴⁸ Նույն տեղում:

